«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «ՊՐՈԲԼԵՄԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱԺԱՄԻՆ»

ԱՌԱՐԿԱ՝	Անգլերեն
ՀԵՂԻՆԱԿ՝	Նառա Սարգսյան
ՄԱՐԶ՝	Արագածոտնի մարզ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝	Չքնաղի հիմնական դպրոց

ԱՐԱԳԱԾՈՏՆ-2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ **3**

ԳԼՈՒԽ 1. ՊՐՈԲԼԵՄԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ **5**

1.1. Պրոբլեմային ուսուցման հասկացությունը, ավանդական և պրոբլեմայինուսուցման համեմատական առանձնահատկությունները *5*

1.2. Պրոբլեմային ուսուցման մեխանիզմը, փուլերը, արդյունքները *7*

ԳԼՈՒԽ 2. ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ **10**

2.1. Դեռահասների տարիքային ընդհանուր բնութագիրը *10*

2.2. Մանկավարժների աշխատանքը դեռահասների հետ *12*

ԳԼՈՒԽ 3. ՊՐՈԲԼԵՄԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ **15**

3.1. Պրոբլեմային ուսուցման միջոցներն անգլերենի դասաժամին *15*

3.2. Պրոբլեմային ուսուցման միջոցների գործնական կիրառությունը *16*

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ **20**

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ **23**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական թեմայի արդիականության հիմնավորում:

Մանկավարժական գործընթացի կազմակերպման առջև ծառացած են բազմաթիվ խնդիրներ, որոնց լուծման նպատակով մշտապես իրականացվում են տարաբնույթ որոնողական աշխատանքներ: Այս աշխատանքներն ուղղված են նոր մեթոդների, ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման արդյունավետ ձևերի և տարբեր միջոցների ուսումնասիրությանը, փորձարկմանը և տարածմանը:

Արդի պայմաններում մանկավարժական գործընթացի կազմակերպման խնդիրների լուծումը և այդ գործընթացի արդյունավետության բարձրացումը մասնագիտական ուսումնասիրությունների կենտրոնում է, որը հնարավոր է կարգավորել ոչ թե առանձին հնարներով, մեթոդներով, այլ միայն դրանց համալիր կիրառման համակարգով՝ մանկավարժական տեխնոլոգիաներով:

Մանկավարժական տեխնոլոգիան գործունեության եղանակների ու միջոցների փոխակերպմանն ուղղված ծրագիր է և այդ ծրագրին համապատասխան կառուցված գործունեություն: Մանկավարժական տեխնոլոգիան որևէ խնդրի քայլ առ քայլ լուծման հաջող փորձ է, հատուկ նպատակով ստեղծված և իրականում կոնկրետ իրադրությունում արդյունավետ գործող համակարգ:

Մանկավարժական տեխնոլոգիաների թվում իր ուրույն տեղն ունի պրոբլեմային ուսուցումը: Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիայի կիրառման դեպքում մանկավարժի ղեկավարությամբ հետազոտական ինքնուրույն աշխատանք է հանձնարարվում, որը ենթադրում է նոր գիտելիքների, կարողությունների և հմտությունների մշակում և ամրապնդում, ստեղծագործական մտածողության և անձնային այլ որակների զարգացում:

Մանկավարժական գործընթացի կազմակերպման խնդիրների կարգավորման, այդ գործընթացի արդյունավետության բարձրացմամբ է պայմանավորված «Պրոբլեմային ուսուցում» թեմայի գծով հետաքրքրությունը, ընտրությունը և այժմեականությունը:

Հետազոտության նպատակի և խնդիրների սահմանում: Հետազոտության հիմնական նպատակն է կատարել պրոբլեմային ուսուցման ընդհանրական ուսումնասիրություն՝ անգլերենի ուսումնական գործընթացի կազմակերպման խնդիրների կարգավորման, այդ գործընթացի արդյունավետության բարձրացման համատեքստում: Առաջադրված նպատակին հասնելու համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ներկայացնել «պրոբլեմային ուսուցում» հասկացությունը,

- մեկնաբանել պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիայով իրականացվող մանկավարժական գործընթացը,
- տալ դեռահասների տարիքային ընդհանուր նկարագիրը,
- դիտարկել մանկավարժների աշխատանքը դեռահասների հետ,
- ուսումնասիրել պրոբլեմային ուսուցման միջոցների կիրառումը դեռահասների հետ աշխատանքում անգլերենի դասաժամին:

Հետազոտության օբյեկտի և առարկայի սահմանում: Ընդհանուր առմամբ հետազոտության օբյեկտը իրադարձությունների դրսևորումն է պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիայի կիրառման պայմաններում, իսկ առարկան՝ որոշակի իրադարձությունների դրսևորման դեպքում (մեր դեպքում անգլերենի դասաժամին դեռահասների հետ աշխատանքում ներդրման պարագայում) պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիայի ապահոված արդյունքները:

Հետազոտության իրականացման մեթոդի (մեթոդիկայի) ընտրություն: Հետազոտության խնդիրները լուծելու նպատակով ուսումնասիրություններ կատարելու ընթացքում կիրառվել են հետևյալ գիտահետազոտական մեթոդները.

- վերլուծվել և ընդհանրացվել են պրոբլեմային ուսուցման, դեռահասների տարիքային առանձնահատկությունների առաջավոր փորձի վերաբերյալ աշխատությունները,
- ուսումնասիրվել են անգլերենի դասընթացի համար նախատեսված տարբեր դասարանների դասագրքերը,
- սովորողներին առաջադրվել են լրացուցիչ, պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիային համապատասխան միջոցներ:

Հետազոտության կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, ընդհանուր մասից, որը բովանդակում է 3 գլուխ, որոնցից յուրաքանչյուրը բովանդակում է երկուական ենթահարց, եզրակացությունից և առաջարկությունների մասից, օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի ծավալը կազմում է 24 էջ (ներառյալ տիտղոսաթերթը, բովանդակությունը, գրականությանցանկը):

ԳԼՈՒԽ 1. ՊՐՈԲԼԵՄԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1.1.Պրոբլեմային ուսուցման հասկացությունը, ավանդական և պրոբլեմային ուսուցման համեմատական առանձնահատկությունները

Նախորդ դարաշրջանի կեսից մանկավարժական գործընթացի կազմակերպումը միտվեց երկու հիմնական ուղղությամբ՝ կառավարելիություն և սովորողների՝ գիտելիքների ձեռքբերման գործընթացում ինքնուրույնության զարգացում: Եվ չնայած այն հանգամանքին, որ գոյություն ունեն այդ ամենն ապահովելու բազմաթիվ մանկավարժական տեխնոլոգիաներ, այնուամենայնիվ, ներկայումս դրանք բովանդակում են մեկը մյուսի տարրերը: Վ.Ա.Սիրատովն իր հոդվածում ընդգծում է, որ գոյություն ունեն և կիրառվում են ուսուցման ավանդական և ոչ ավանդական տեսակներ[1]: Ի.Վ.Վիննիկովան, ուսումնասիրելով պրոբլեմային ուսուցման առանձնահատկությունները, փաստում է, որ վերջինս զարգացնող ուսուցման ձև է, որի ընթացքում դպրոցականները սովորում են ուսուցչի կողմից հաղորդվող պատրաստի դասանյութը, միևնույն ժամանակ մասնակցում են ուսումնական գործընթացին, որն ուսուցչի կողմից միտվում է գաղափարների, մտքերի, գիտելիքների ինքնուրույն փնտրմանը: Հեղինակը նաև նշում է, որ ուսուցման այս տեխնոլոգիային առավել բնորոշ է խմբային ուսուցումը[2]:

Դեռ նախորդ դարաշրջանում հստակ էր, որ ավանդական ուսուցումը տեղեկատվական-հաղորդակցական, դոգմատիկ, պասիվ տեսակ է և ավանդական ուսուցմամբ ապահովվում են մանկավարժական գործընթացի սահուն կայացման բոլոր պայմանները, սովորողին մնում է միայն մեկ բան՝ հաճախել դասերին, լինել ուշադիր և ստանալ այն, ինչը նախատեսված է ուսումնական ծրագրերով: Ավանդական ուսուցումը հենվում է սովորողների տարիքային առանձնահատկությունների վրա: Այսինքն, միտում չկա զարգացնել և կայացնել անհատին, այլ հենվել վերջինիս արդեն իսկ առկա բնութագրիչների վրա[3]:

Պրոբլեմային ուսուցման արդյունավետությունն ընդգծելու համար ներկայացնենք ավանդական և պրոբլեմային ուսուցման առանձնահատկությունները և բնութագրիչները՝

---

[1] Ситаров В.А. Проблемное обучение как одно из направлений современных технологий обучения [Текст] // Знание. Понимание. Умение -М.: Московский гуманитарный университет -№1 -2009. -С. 148-150.

[2] Винникова И.В. Проблемные задания на развитие психических процессов/ И.В.Винникива//, 2013., С. 25.

[3] Ксензова Г.Ю. Перспективные школьные технологии: учебно-методическое пособие/ Г.Ю.Ксензова.- Москва: Педагогическое общество России, 2017., с. 56.

Աղյուսակ 1. Ավանդական և պրոբլեմային ուսուցման առանձնահատկությունները և բնութագրիչները

Ավանդական ուսուցում	Պրոբլեմային ուսուցում
1. Ուսումնական նյութը սովորողներին տրամադրվում է պատրաստ վիճակում, ուսուցիչը կենտրոնացած է ուսումնական ծրագրի ապահովման գծով	1. Նոր տեղեկատվությունը սովորողները ստանում են տեսական և գործնական խնդիրների լուծման արդյունքում
2. Նյութի բանավոր կամ դասագրքի ներկայացման ընթացքում դրսևորվում են բացեր, խոչընդոտներ և դժվարություններ, որոնք առաջանում են սովորողի՝ դիդակտիկ գործընթացից ժամանակավոր շեղման հետևանքով:	2. Խնդիրների ստեղծման միջոցով ուսումնական նյութի մատուցման դեպքում սովորողները հաղթահարում են բոլոր դժվարությունները, սովորողի ակտիվությունը և ինքնուրույնությունը բարձր մակարդակի վրա են:
3. Նոր նյութը հաղորդվում է ըստ ընկալման մակարդակների:	3. Նոր նյութի ընտրությունը կախված է դասարանի ընդհանուր ընկալման միջին մակարդակից:
4. Ուսումնական հաջողությունների, առաջադիմության վերահսկողությունը միայն հազվադեպ է կախված ուսումնական գործընթացից, այն չի հանդիսանում ուսումնական գործընթացի կարևորագույն բաղադրիչ:	4. Սովորողների ակտիվության բարձրացման միջոցով հնարավոր է հասնել շարժառիթների ակտիվացմանը, ինչը հանգեցնում է ուսումնական հաջողությունների, առաջադիմության: Իսկ վերահսկողությունը տեղի է ունենում անընդհատ:
5. Բացակայում է բոլոր սովորողներին ներգրավելու և արդյունք ապահովելու հնարավորությունը, գործնական աշխատանքների կատարումը հասնումէ նվազագույնի:	5. Ուսումնական գործընթացի արդյունքները բավականին կայուն են և բարձր: Սովորողները հեշտությամբ ընկալում են ստացվող գիտելիքները նոր պայմաններում և միաժամանակ զարգացնում են իրենց հմտությունները և ստեղծագործական կարողությունները:

Վ.Ա.Կրուտեցկին ներկայացրել է ուսումնական գործընթացի պրոբլեմայնության մակարդակների սխեման, որը հետազոտական ուղու ձևավորման և դիտման կարևորագույն միջոց է:

Աղյուսակ 2. Ուսումնական գործընթացի պրոբլեմայնության մակարդակների սխեմա[4]

Մակարդակ	Ուսուցչին վերապահված աջակցությունների քանակը	Աշակերտին վերապահված գործողությունների քանակը	Ի՞նչ է անում ուսուցիչը	Ի՞նչ է անում աշակերտը
0 (ավան-դական)	3	-	Դնում է խնդիրը, ձևակերպում է և տալիս է լուծումը	Հիշում է խնդրի լուծումը
I	2	1	Դնում է խնդիրը, տալիս է ձևակերպումը	Լուծում է խնդիրը
II	1	2	Դնում է խնդիրը	Ձևակերպում է և տալիսէ լուծումը
III		3	Անցկացնում է ընդհանուր կազմակերպում, վերահսկողություն	Գիտակցում է տվյալ իրադարձության խնդիրը, ձևակերպում էև տալիս է լուծումը

Մեկնաբանենք այդ մակարդակները՝

- 0 մակարդակն ավանդական ուսուցման մակարդակն է: Ուսուցիչն անձամբ է կառավարում ողջ ուսումնական գործընթացը, անձամբ սահմանում է խնդիրը, ձևակերպում այն, տալիս լուծումը:

[4] Крутецкий, В. А. Основы педагогической психологии. М., 1972, с.63-78.

- 1-ին մակարդակը սովորողին ներգրավվածության որոշակի աստիճան է ենթադրում: Սակայն բոլոր գործողությունները կատարվում են ուսուցչի մասնակցությամբ և ուղղորդմամբ:
- 2-րդ մակարդակում սովորողը դնում է խնդիրը, ուսուցիչն օգնում է լուծել այն: Սովորողի մոտ զարգանում է խնդիր սահմանելու կարողությունը:
- 3-րդ մակարդակում սովորողն իրականացնում է պրոբլեմային ուսուցման բոլոր դրույթները, զարգանում է ինչպես խնդիր սահմանելու և ինքնուրույն լուծելու կարողությունը, այնպես էլ ստեղծագործականությունը[5]:

-

1.1. Պրոբլեմային ուսուցման մեխանիզմը, փուլերը, արդյունքները

Ընդհանուր առմամբ պրոբլեմային ուսուցման մեխանիզմը հետևյալն է.սովորողների առաջ դրվում է խնդիր, որը կարող է լինել նաև ճանաչողական բնույթի, որի վերաբերյալ լուծման ուղիներ և եղանակներ սովորողը պետք է գտնի ուսուցչի անմիջական մասնակցության բացառմամն կամ ինքնուրույն: Նրանք սահմանում են խնդրի լուծման հիպոթեզ կամ վարկած, սահմանում են այդ վարկածի ստուգման միջոցները, անցկացնում են փորձարարական ուսումնասիրություն, դիտում, վերլուծում են արդյունքները, քննարկում և ապացուցում[6]:

Առաջին արդյունքը կրթության՝ միջազգային չափանիշներին համապատասխան որակի ապահովումն է լինում, որը պետք է կողմնորոշված լինի ոչ այնքան սովորողների կողմից մեծաքանակ գիտելիքների յուրացմանը, որքան սոցիալ-տնտեսական զարգացման արդի պայմաններում անձի ինքնուրույնության ու պատասխանատվության դրսևորմանը ինքնիրացմանը, ինքնարտահայտմանը ստեղծագործական ունակությունների, կարողությունների, անձնային որակների զարգացմանը, սովորել սովորելու, արդյունավետ աշխատելու ի շահ մեր երկրի ու հասարակության բարօրության:

Պրոբլեմային ուսուցումն ընդհանուր առմամբ փուլային գործընթաց է, ենթադրում է որոշակի, իրար հաջորդող փուլերի պարտադիր իրականացում՝

- ընդհանուր պրոբլեմային իրադրության գիտակցում,
- պրոբլեմային իրավիճակի վերլուծություն, սահմանում,

[5] Матюшкин А.М. Проблемные ситуации в мышлении и обучении. Москва, 2014., с. 45.

[6] Селевко Г.К., Педагогические технологии на основе активизации, интенсификации и эффективного управления,УВП. М.: НИИ школьных технологий, Москва, 2005, с. 58-59.

- խնդրի լուծում (առաջքաշում, վարկածի հիմնավորում, հետրողական ստուգում և այլն),
- խնդրի լուծման արդյունքի ստուգում:

Պրոբլեմային ուսուցման փուլային կառուցվածքը համապատասխանում է անձի մտածողական ակտի փուլերին, որը գործողության մեջ է դրվում պրոբլեմային իրադրությունում և բովանդակում է խնդրի գիտակցումը, լուծումը և եզրահանգումը:

Պրոբլեմային ուսուցման համատեքստում մտածողության հիմնական առանձնահատկությունն այն է, որ սույնի միջոցով հիշողության մեջ կուտակված գիտելիքներն ու անմիջական ընկալումները օգտագործվում են իմացական նոր արդյունքների, եզրակացությունների, ընդհանրացումների հասնելու նպատակով: Այս գործընթացում մարդու գիտելիքները, ինֆորմացիան ենթարկվում են ձևափոխումների, վերակառուցումների[7]:

Հնարավոր է, որ խնդիրը լուծվի նախկինում լուծված խնդիրների փորձի հիմքով: Սույնը նույնպես համարվում է մտածողություն, սակայն սա անվանում են վերարտադրող, ոչ ստեղծագործական մտածողություն: Երբ խնդիրը լուծվում է կյանքի ընթացքում ձեռք բերված փորձի և սխալների մեթոդով, ապա մտածողությունն ու ուսուցումը ընթանում են որպես բարդ ընդհանրական գործընթաց: Սակայն անհրաժեշտ է նշել, որ առավել արդյունավետ է ստեղծագործական մտածողությունը:

Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիայի կիրառման դեպքում ակտիվանում է ակնառու-գործնական մտածողությունը, որի կարևոր յուրահատկությունն այն է, որ մտածողության բուն գործընթացն իրենից ներկայացնում է իրական առարկաների հետ մարդու կողմից կատարվող պրակտիկ վերափոխիչ գործունեություն: Տվյալ դեպքում խնդիրների լուծման հիմնական պայմանները համապատասխան առարկաների հետ կատարվող ճիշտ գործողություններն են[8]:

Ակնառու-գործնական մտածողության կարևորությունն ընդգծելու համար նշենք, որ տեսական-պատկերավոր մտածողությունը նշվածից տարբերվում է նրանով, որ այս դեպքում խնդիրների լուծման համար մարդու կողմից օգտագործվող նյութը ո՛չ հասկացություններն են, ո՛չ էլ դատողությունները կամ եզրահանգումները, այլ՝ պատկերները: Դրանք կա՛մ անմիջականորեն դուրս են բերվում հիշողությունից, կա՛մ ստեղծագործաբար վերստեղծվում երևակայությամբ:

[7] Duch, B. J., Groh, S. E, & Allen, D. E. (Eds.). The power of problem-based learning. Sterling, VA: Stylus., 2001, p.53.
[8] Nilson, L. B. Teaching at its best: A research-based resource for college instructors (2nd ed.). San Francisco, CA: Jossey- Bass. , 2010, p.41.

Պրոբլեմային ուսուցման մեկ այլ, ոչ պակաս կարևոր առանձնահատկությունն այն է, որ զարգանում է դեռահասի քննադատական մտածողությունը: Քննադատական մտածողությունը ակնառու-գործնական մտածողության դրսևորում է: Այն իրենից ներկայացնում է ճանաչողական գործընթաց: Այն վերաբերում է փորձի արդյունքում ստացված տեղեկույթի վերլուծությանը, համադրմանն ու գնահատմանը դիտումների, խորհրդածությունների կամ հաղորդակցման միջոցով: Քննադատական մտածողությունը տրամաբանական, ստեղծագործական մտածողության յուրահատուկ համադրում է[9]:

Քննադատական մտածողությունը ներառում է մտածական այնպիսի գործառույթներ, որոնք որոշում են այնպիսի գործընթացների ընդունելը կամ չընդունելը, որպիսիք են նպատակադրումը, հիմնախնդրի բացահայտումը, վարկածի առաջադրումը, փաստարկներ բերելը, հիմնավորելը, հետևանքների կանխատեսումը, այլընտրանքային տեսակետները: Այն ներառում է իմացական հիմնական կարողությունները (գիտելիք և ըմբռնում) կիրառելու ունակությունը բարդ և ոչ միանշանակ իրավիճակների ու հիմնախնդիրների համադրման, վերլուծության և գնահատման համար:

Ստացվում է, որ ավանդական ուսուցումը հիմնված է տեսական մտածողության, իսկ պրոբլեմային ուսուցումը՝ ակնառու գործնական մտածողության վրա:

Պրոբլեմային ուսուցման կիրառման դեպքում մասնագետ մանկավարժը սովորողին պատրաստի գիտելիք չի փոխանցում, այլ ներկայացնում է խնդիրը կամ հարցը, որը պետք է լուծում գտնի և ենթադրում է լուծման համար տարբեր ուղիների որոնում: Ներկայացվող հիմնահարցով մասնագետը ձգտում է հետաքրքրել սովորողին, նրա մեջ հետաքրքրություններ է առաջացնում, որպեսզի նա ուսումնասիրի առկա խնդիրը բոլոր կողմերով և գտնի ճիշտ լուծում, այսինքն՝ տվյալ խնդիրը լուծելու նախաձեռնություն է առաջացնում:

Ուսուցիչը միայն այն ժամանակ է իրականացնում ուսուցման արդյունքների վերջնական ստացումն ու գնահատումը, երբ արդեն սպառված է ուսուցման հատկացված ժամանակը և պետք է պարզել սովորողի ձեռք բերած մակարդակը՝ ոչ միայն ուսուցման արդյունքների, այլև սովորողի զարգացվածությանը մանկավարժական և սոցիալական գնահատական տալու համար: Այսինքն, նշանակել վերջնական գնահատական, որն իրավունք է տալիս սովորողին փոխադրել դասարանից դասարան, կուրսից կուրս, ավարտել դպրոցը, ստանալ հասունության վկայական կամ մասնագիտական որակավորում:

[9] Foundation for Critical Thinking, A draft statement of principles. The National Council for Excellence, 2019. Հղումը՝ https://www.criticalthinking.org/pages/the-national-council-for-excellence-in-critical-thinking/406 հասանելի է 19.08.2022, ժամը 21:49.

ԳԼՈՒԽ 2. ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Դեռահասների տարիքային ընդհանուր բնութագիրը

Դեռահասության տարիքն ընդգրկում է 11-12-ից 16-17տարեկան հասակը [10] : Մասնագիտական գրականության մեջ դեռահասությունը որակվում է որպես «անցումային», «ճգնաժամային», «դժվար» տարիք [11] : Այս շատ կարճ ժամանակահատվածում անձը մանկությունից անցում է կատարում հասունություն: Տարիքային այս շրջանում տեղի են ունենում արմատական և բուռն փոփոխություններ, ձևափոխություններ՝ ինչպես հոգեկան, մտավոր, այնպես էլ սոցիալական, ֆիզիկական ոլորտներում: Ընդ որում, այդ փոփոխություններն աչքի են ընկնում իրենց անհամընկնելիությամբ և անհամաչափությամբ: Այդ իսկ պատճառով էլ դեռահասությունը դիտարկվում է որպես ներքին ու արտաքին հակասությունների ժամանակաշրջան:

Դեռահասության տարիքում մարդու օրգանիզմում տեղի են ունենում արմատական փոփոխություններ, որոնք տանում են դեպի կենսաբանական հասունություն[12]:
Դեռահասության տարիքում շարունակվում է ինքնագիտակցության ձևավորումը և զարգացումը: Ինքնագիտակցությունը՝ այդ նորագոյացությունն, անձի կարևորագույն առանձնահատկությունն է, քանի որ արտահայտում է մարդկանց ու աշխարհի նկատմամբ դեռահասի կենսական նոր դիրքորոշումը:

Դեռահասի սոցիալական առանձնահատուկ ակտիվության էությունն այն է, որ նա մեծ ընկալունակություն է հանդես բերում չափահասների շրջապատում և նրանց փոխհարաբերություններում գոյություն ունեցող կանոնների, արժեքների և վարքի ձևերի նկատմամբ:

Իր անձի նկատմամբ հետաքրքրությունը, իր առանձնահատկությունների մասին գիտելիքներ ունենալու պահանջմունքը և համապատասխան խորհրդածությունները դեռահասի անձի հիմնական առանձնահատկություններն են: Նա ակտիվորեն սկսում է հասկանալ ինքն իրեն, իմաստավորել իր դերը շրջապատում: Այդ տեսակետից դեռահասության տարիքի հիմնական հարցն է «ո՞վ եմ ես»:

Տարիքային այս փուլում տեղի է ունենում հոգեկան բարձրագույն գործառույթների նոր վերադասավորում, որի արդյունքում մտածողությունը, մասնավորապես հասկացությունների ձևավորման գործառույթը, սկսում է առաջատար տեղ գրավել մյուս

[10] Фоменко Н.В. Подростковый возраст как наиболее сложный этап развития ребенка // Вестник Таганрогского государственного педагогического института. 2014. № 2. С. 201.
[11] Курманбакеева Л. В. Этапы становления ребенка как социального субъекта: философская периодизация. Евразийский Союз Ученых (ЕСУ) # 7 (16), 2015., с. 136.
[12] Немов Р. С.,Психология, https://www.gumer.info/bibliotek_Buks/Psihol/nemov2/04.php հասանելի է 19.08.2022, ժամը22:57.

գործառույթների համեմատ և սկսում է իրենով պայմանավորել դրանց գործնական առանձնահատկությունները: Դեռահասների մոտ սկսում է զարգանալ տեսական, ձևական և ռեֆլեքսիվ մտածողությունը: Այդպիսի մտածողությունը սկսում է զարգանալ 11-12 տարեկանում: Դեռահասը վարկածային-դեդուկտիվ դատողություններ կատարելու ընդունակություն է ձեռք բերում: Իմացական խնդիրներ լուծելիս նա արդեն կարողանում է վարկածներ առաջ քաշել: Այս տարիքում առանձին մտածողության գործողությունները վեր են ածվում մեկ ընդհանուրի[13]: Մյուս կարևոր առանձնահատկությունը այն է, որ նրանք կարողանում են վերլուծել վերացական գաղափարները: Դեռահասները սկսում են խորհել իդեալների, ապագայի մասին, նրանց մոտ փոխվում է աշխարհաճանաչումը[14]:

Դեռահասը գիտակցում է իր իմացական գործողությունները և կառավարում է դրանք: Վերահսկվող ու կառավարվող է դառնում նաև խոսքը, նրանք ձգտում են ճիշտ ու գեղեցիկ խոսել: Նրանց մոտ սկսում է զարգանալ մենախոսությունը և գրավոր խոսքը: Նրանք սկսում են արագ, արտահայտիչ և ճիշտ ընթերցել նյութը և նույնիսկ անգիր արտասանել: Կարողանում են ինքնուրույն շարադրություններ գրել, խոսքը դարձնել ինքնուրույն, մտքեր արտահայտել և հիմնավորել այն: Դեռահասը սկսում է մտածել կյանքի իմաստի մասին[15]:

Կարծում ենք, որ դեռահասության տարիքային փուլի մեկ այլ կարևոր առանձնահատկություն է այն, որ փոփոխվում են մեծահասակի և դեռահասի միջև հաստատված և մանկության տարիքին հատուկ փոխհարաբերությունները: Դրանք, փաստորեն, վերաճում են փոխհարաբերությունների, որոնք հատուկ են չափահաս մարդկանց շփման գործընթացին:

Դեռահասը սկսում է դիմադրություն ցույց տալ այն պահանջներին, որոնք առաջ նա հաճույքով էր կատարում: Նա վիրավորվում է և բողոքում, երբ սահմանափակում են իր ինքնուրունությունը: Դեռահասը ձեռք է բերում սեփական արժանապատվության հստակ զգացում, նա իրեն գիտակցում է որպես մարդու, որին չի կարելի ճնշել, զրկել ինքնուրունության իրավունքից: Չափահասների իրավունքները նա սահմանափակում է, իսկ իր իրավունքների սահմանները՝ ընդլայնում՝ պահանջելով, որ հարգեն իր անձն ու ավելի շատ ինքնուրունություն տան, հավասար համարեն մեծերին: Նա ձգտում է հասնել նրան, որ մեծերը ընդունեն իր պահանջները: Ի պատասխան մեծահասակների կողմից իրենց չհասկանալուն՝ դեռահասները սկսում են չլսել և չենթարկվել նրանց. արդյունքում

[13] Մեջբերումն ըստ՝ Реана А. А.,Психология подростка,-М., Академия, 2008., с. 91.

[14] Левкова Т.В. Поиск смысла жизни как задача развития современного подростка // Современные научныеисследования и инновации. 2016. № 1., с. 159.

[15] Чудновский В.Э. К вопросу о необходимости учебного курса формирования смысложизненных ориентаций старшеклассников // Вестник МГОУ, серия «Психологические науки». 2015. No 1. С. 66-72

նրանց մոտ ձևավորվում է անկոտրում նեգատիվիզմ: Եթե մեծահասակը ընդունում է բողոքի պատճառը դեռահասի, ապա նա իր վրա է վերցնում հարաբերությունների վերականգնումը և այդ ամենը իրականանում է առանց կոնֆլիկտի: Հակառակ դեպքում առաջանում է լուրջ ներքին և արտաքին կոնֆլիկտ՝ դեռահասության շրջանի ճգնաժամ, որին ներգրավվում են և դեռահասները, և մեծահասակները[16]:

Դեռահասությունը մի շրջան է, երբ դեռահասը սկսում է նորովի գնահատել իր հարաբերությունները ընտանիքի հետ: Իրեն ինքնուրույն անձ զգալու ձգտումը առաջ է բերում իր վրա տարիներով ազդեցություն ունեցած մարդկանցից ու հատկապես ծնողներից օտարվելու պահանջմունք: Ընտանիքից օտարումը արտաքնապես արտահայտվում է նեգատիվիզմով. դեռահասը ձգտում է հակադրվել այն մարդկանց բոլոր առաջարկություններին, զգացմունքներին, դեպի ում ուղղված է օտարացումը[17]:

Այս ամենից հնարավոր է խուսափել այն դեպքում, երբ ծնողները և մանկավարժները կարողանան ապահովել ակտիվ փոխգործացություն դեռահասների առանձնահատկությունների հետ աշխատանքի համատեքստում: Տարիքային այս առանձնահատուկ փուլում ծնողների գերագույն խնդիրն դեռահասին հասցնել իրեն հասկանալու գիտակցման, միտել նրան գիտակցաբար լուծել իր առջև ծառացած խնդիրները:

2.1. Մանկավարժների աշխատանքը դեռահասների հետ

Այսպիսով, կարծում ենք, որ հաշվի առնելով դեռահասների առանձնահատկությունները՝ մանկավարժների աշխատանքը դեռահասների հետ պետք է կազմակերպվի բավական մանրամասն: Մանկավարժների և դեռահասների միջև կոնտակտի հաստատումը դպրոցական կյանքում կարելի է ասել ամենաբարդ շրջաններից մեկն է: Դեռահասները սկսում են ուսումնասիրել շփման նոր ձևերը մեծահասկների հետ, բայց միևնույն ժամանակ խիստ սահմաններ են դնում իրենց հետ շփման ընթացքում: Լինելով ներառված այնպիսի կառուցվածքային գործընթացի մեջ ինչպիսին դասապրոցեսն է՝ մանկավարժը պետք է ունենա արձագանքման հստակ մեխանիզմեր, որպեսզի կարողանա արդյունավետ հետադարձ կապ տալ դեռահասին և արդյունավետ իրականացնել դասապրոցեսը: Ուստի դպրոցական հոգեբանի կարևոր գործառույթներից է պատրաստել մանկավարժներին դեռահասների հետ հանդիպմանը և փոխանցել այն հստակ անելիքները, որոնք կդարձնեն շփումն արդյունավետ:

[16] Худоян, С.С., Патологические метаморфозы "Я" и кризисы развития личности// Независимый психиатрический журнал// М., 2007 , № 4. с. 29-33.

[17] Մեջբերումն ըստ՝ Осин Е.Н., Леонтьев Д.А. Дифференциальный опросник переживания одиночества: структура и свойства // Психология. Журнал Высшей школы экономики, 2013. Т. 10. № 1. С. 55-81., սկզբնաղբյուրը՝ Минаев А.В. «Отчуждение в подростковом возрасте и его преодоление» (автореферат канд. диссертации), 1999, с.16.

1. Լսել դեռահասին:

2. Նկատել և խրախուսել դեռահասի ջանքերը, եթե նույնիսկ դրանք կատարյալ չեն:

3. Աջակցել դեռահասներին ձախողումների ժամանակ:

4. Դեռահասներին ասել այն, ինչ նրանց օգնում է իրենց առանձնահատուկ զգալ:

5. Ձևավորել ապահով մթնոլորտ դեռահասի ինքնարտահայտման համար:

7. Խոսել դեռահասի հետ հավասարը հավասարի հետ սկզբունքով:

8. Ապահովել խոսակցության գաղտնիությունը:

9. Դաստիարակության բոլոր մոտեցումները համաձայնեցնել մյուս մեծահասակների (ծնողներ, մանկավարժ և այլք) հետ:

10. Լինել օրինակ դեռահասի համար[18]:

Աղյուսակ 3.

Դեռահասության տարիքին բնորոշ խնդիրները և դրանց լուծման ուղիները

Խնդիրը	Լուծման ուղին
Վարքային խնդիրներ	Դեռահասն իր վարքով ցույց է տալիս իր ներաշխարհը: Ագրեսիվ վարքային դրսևորումների պարագայում պետք է լսել նրան, թույլ տալ արտահայտվել, չնախատել և խրախուսել այն դեպքում, երբ տևական խնդիրներից հետո դեռահասը դրական քայլ է անում այդ խնդիրների կարգավորման գծով:
Ֆիզիկական և հոգեկան առողջության խնդիրներ	Զբաղվել դեռահասի ֆիզիկական կուլտուրայով, անհրաժեշտության դեպքում, երբ չկան բավարար գիտելիքներ զբաղվել դեռահասի հոգեկան առողջությամբ, դիմել համապատասխան մասնագետների՝ չվախենալով որևէ կարծիքից:
Արտաքին և ներքին առանձնահատկությունների անհամապատասխա-նությունը	Դեռահասը, անկախ արտաքին փոփոխություններից, ներքին հարթությունում շարունակում է մնալ երեխա և ունենալ ուշադրության, քնքշության պահանջ, հետաքրքրություն խաղերի, զվարճանքների նկատմամբ: Ծնողները և մանկավարժները պետք է օգնեն դեռահասին ինքնագիտակցության, սեփական անձի գերակայության, սեռային պատկանելության զգացումների ձևավորման հարցում՝ մեծ մասամբ բացատրական աշխատանքներ տանելու միջոցով
Ծնողների ծայրահեղության հասնող հոգատարության հետևանքով դեռահասի մոտ առաջացած խնդիրներ սոցիալականացման առումով	Դեռահասի փոխարեն չհաղթահարել սոցիալականացման դժվարությունները՝ չկարծելով, թե նրան ազատում են «կյանքի դժվարություններից»

Համատեղ աշխատանքի ընթացքում մանկավարժներն առաջարկում են ծնողներին կազմել իրենց դեռահաս երեխաների վերաբերյալ անկետաներ, որտեղ դուրս կբերեն իրենց երեխաների առանձնահատկությունները, խնդիրները, վարքագծային բնութագրիչները: Այս մասին իր հոդվածում գրում է Ա.Մ.Պրիխոժանը[19]:

[18] Արդյունավետ շփում դեռահասների հետ https://elearning.kasa.am/pluginfile.php/10018/mod_resource/content/0/%D4%B1%D6%80%D5%A4%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A1%D5%BE%D5%A5%D5%BF%20%D5%B7%D6%83%D5%B8%D6%82%D5%B4%20%D5%A4%D5%A5%D5%BC%D5%A1%D5%B0%D5%A1%D5%BD%D5%AB%20%D5%B0%D5%A5%D5%BF.pdf հասանելի է19.08.2022, ժամը 23:04.

[19] Прихожан А.М. Работа с родителями подростков (материалы к проведению родительских собраний в среднейшколе) (окончание) Вестник практической психологии образования (2009. Том 6, № 2. С. 96-104)

Դեռահասների հետ աշխատանքի առանձնահատկությունների սահմանումը հնարավոր է ծնողական ժողովներին հոգեբանի ներգրավման միջոցով: Ծնողական ժողովների ընթացքում բացահայտելով դեռահասության տարիքի առանձնահատկությունները՝ հոգեբանը ուշադրությունը կենտրոնացնում է այն խնդիրների վրա, որոնց բախվում են ծնողների մեծամասնությունը: Սա թույլ է տալիս հասնել նրան, որ ծնողները դադարում են մտածել, թե իրենց դեռահասները միակն են, որ ունեն նման խնդիրներ, ինչն էլ ապահովում է ծնողների ձերբազատումն այն մտքից, որ իրենք օրինակելի ծնող չեն:

Երբ ծնողների մոտ ձևավորվում է թյուր կարծիք այն մասին, թե դեռահասության տարիքում գտնվող իրենց երեխաների վարքագծային, հոգեբանական և այլ առանձնահատկությունները պայմանավորված են տարիքին բնորոշ ճգնաժամով, վերջիններս ստանձնում են պասիվ դիրք՝ հուսալով, որ տարիքի հետ այդ ամենը անցողիկ բնույթ կկրի: Այս պարագայում ծնողն ինքն է օտարանում դպրոցից, մանկավարժից, հոգեբանից և սպասում է, որ տարիքի անցնելուն պես բոլոր խնդիրները կհաղթահարվեն:

Դեռահասի հետ աշխատանքի առանձնահատկությունների վերհանման նպատակով հոգեբանը ծնողներին միտում է այն գաղափարին, որ նրանք պետք է հասկանան, թե ինչ է սպասում իրենց դեռահասն իրենցից, ինչպիսի աջակցության կարիք ունի: Հոգեբանը ծնողներին պետք է բացատրի, թե ինչպիսի բացահայտումների պարագայում ինչպիսի արդյունք պետք է ծնողներն ակնկալեն: Սակայն սա անհիմն չպետք է լինի: Հոգեբանը ծնողներին պետք է բացատրի նաև, թե այդ արդյունքներն ինչով են պայմանավորված: Որքան պարզ և արտահայտիչ կլինեն հոգեբանի մեկնաբանությունները, այնքան ավելի արագ ծնողները կգիտակցեն իրենց երեխաների խնդիրները:

ԳԼՈՒԽ 3. ՊՐՈԲԼԵՄԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ

3.1. Պրոբլեմային ուսուցման միջոցներն անգլերենի դասաժամին

Ուսուցման միջոցների դասակարգումը իրականացվում է ըստ գիտելիքների աղբյուրների՝ ուսուցչի բանավոր խոսք, տարբեր տպագիր նյութեր, զննական նյութեր, առարկաներ կամ վերակառուցումներ, տեսալսողական աղբյուրներ՝ կինոֆիլմեր, դիմանկարներ, կիրառական առարկաներ, լեզվական իրականության արվեստի ռեկոնստրուկցիաներ՝ կինո, գեղարվեստական գրականություն, գեղանկարչություն, քանդակագործություն, ճարտարապետություն: Ցավոք, այսօր մեր դպրոցներում վերը նշվածներից ոչ բոլորն է հնարավոր ապահովել է, այն էլ յուրաքանչյուր դասի համար առանձին: Մենք ընտրել ենք անգլերենի դասընթացի առկա նյութերը, այնպիսիք, որոնք հնարավորություն են տալիս փոքր ինչ ճանաչել դեռահասին, իմանալ նրա պատկերացումները: Եվ սա հնարավոր է անել բոլոր դասաժամերի համար: Այս միջոցները օգտագործելու համար անհրաժեշտ են որոշակի կարողություններ և հմտություններ: Ուսուցիչը խնդիր ունի դրանք ձևավորելու, ինչը բարդացնում է ուսուցումը: Ընդ որում, ոչ բոլոր դպրոցներն են ապահովված տեսալսողական միջոցներով, ինչը, շատ հաճախ, լուծվում է ուսուցիչների ջանքերով: Ցանկալի կլիներ դպրոցներին ապահովել գեթ մեկ նման հնարավորություններ ունեցող դասասենյակով՝ մերթընդմերթ տարբեր առարկաների շրջանակներում դասընթացներ անցկացնելունպատակով:

Դեռահասի հետ աշխատելու ընթացքում դասավանդման գործընթացը պահանջում է գիտականորեն հիմնավորված մեթոդների և հնարքների կիրառում: Դրանք պետք է ընտրվեն ուսուցման նպատակներին և բովանդակությանը համահունչ[20]:

Դեռահասի հետ աշխատանքի շրջանակներում, կարծում ենք, անգլերենի ուսուցչի կողմից կիրառելի են *պրոբլեմային շարադրանքը, ուսումնական պրոբլեմը, պրոբլեմային հարցը, պրոբլեմային իրավիճակը:* Նախ հակիրճ անդրադառնանք դրանցից յուրաքանչյուրին:

Պրոբլեմային շարադրանք: Այս մեթոդի ամենակարևոր հատկանիշը գիտելիքների հաղորդման ընթացքում ուսուցչի կողմից պրոբլեմային հարցերի առաջադրելն է: Պրոբլեմային շարադրանքի մեթոդի էությունը այն է, որ ուսուցիչը ցուցադրում է պրոբլեմի լուծման նմուշները, իսկ սովորողները մտովի հետևում են նրա տրամաբանությանը:

[20] Ситаров В.А. Проблемное обучение как одно из направлений современных технологий обучения [Текст] // Знание. Понимание. Умение -М.: Московский гуманитарный университет -№1 -2009. -С. 151-153.

Ուսուցչի խնդիրն է բարդ պրոբլեմները այնպես ձևակերպել, որ ապահովվի սովորողների ակտիվ մասնակցությունը դրանց քննարկմանը:

Ուսումնական պրոբլեմը, հակառակ գիտականի, տրամաբանական ու հոգեբանական հասկացություն է, որը նպաստում է ուսումնաճանաչողական խնդիրների լուծմանը, աշակերտների մտավոր կարողությունների զարգացմանը: Հիմքում ընկած հարց—առաջադրանքի և սովորողի գիտական հնարավորությունների միջև ծագած հակասությունը լուծվում է աշակերտի որոնողական գործունեության միջոցով:

Պրոբլեմային հարցը պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիայով կազմակերպվող ուսումնական գործընթացի «մեխն է», որի ձևակերպումն էլ ապահովում է պրոբլեմային իրավիճակ և հնարավոր դարձնում պրոբլեմային ուսուցման արդյունավետ կիրառումը: Բովանդակվում է պրոբլեմային շարադրանքում՝ ճանաչողական դժվարության, հարցի կամ խնդրի ձևով:

Պրոբլեմային իրավիճակներն առաջանում են պրոբլեմային հարցի ձևակերպմամբ: Դրանք այն իրավիճակներն են. որոնց հաղթահարման համար սովորողները կատարում են որոնողական, հետազոտական աշխատանքներ:

Պրոբլեմային ուսուցումը ենթադրում է կարողությունների գործնական կիրառություն:

3.2. Պրոբլեմային ուսուցման միջոցների գործնական կիրառությունը

Մեր աշխատանքում մենք մեջբերել էինք Ա.Մ.Պրիխոժանի կարծիքը, ով գտնում էր, որ համատեղ աշխատանքի ընթացքում մանկավարժները պետք է առաջարկեն ծնողներին կազմել իրենց դեռահաս երեխաների վերաբերյալ հարցաշարեր, որոնք հնարավորություն կտան դուրս բերել դեռահասների առանձնահատկությունները, խնդիրները, վարքագծային բնութագրիչները: Սա հնարավոր է և պետք է լայնորեն կիրառել անգլերենի դասընթացի շրջանակներում:

Ստորև ներկայացված հարցաշարերը ուսուցչին թույլ կտան բացահայտել դեռահասի հոգեբանական առանձնահատկությունները, նրա պատկերացումներն ինքն իր մասին: Մեջբերենք հարցերից և վարժություններից որոշները:

Ուսուցիչը առաջարկում է դեռահասներին կազմել ստորև ներկայացված հարցերի պատասխաններից բաղկացած շարադրանք:

1. ***Do you think you know yourself?***
2. ***Can you foresee how you will behave in different situations?***
3. ***Are you tolerant? dominant? attentive? selfish?***

Թավ տառերով գրված հարցերի պատասխանների միջոցով ուսուցիչը պատկերացում է կազմում, թե դեռահասն ինչ պատկերացում ունի ինքն իր մասին:

d. How do you feel when you:

wake up on a rainy day?

think about your next holiday? walk along a

dark street at night?

say good-bye to someone you love?

go to the dentist? take off in an airplane?

e. Answer the questions:

1. *How sociable are you?*
2. *How dominant do you want to be?*
3. *What worries do you have?*
4. *What is the most important thing you look for in other people?*
5. *What do you dislike most of all in yourself /in other people?*
6. *Do you have any features you would like to get rid of?*

Թավ տառերով գրված հարցերի պատասխանների միջոցով ուսուցիչը պատկերացում է կազմում, թե դեռահասի մոտ ինչ հույզեր են առաջանում տարբեր իրավիճակներում, ինչ կարգավիճակում է դեռահասն իրեն պատկերացնում հասարակության մեջ և ինչ ապագա է պատկերացնում ինքն իր համար:

Այս համատեքստում ուսուցչի կողմից պրոբլեմային ուսուցման նախընտրելի սխեման կունենա հետևյալ տեսքը՝



Գծապատկեր 1. Կոնկրետ դեպքում պրոբլեմային ուսուցման նախընտրելի սխեմա

Հարցերի պատասխանները ստանալուց հետո ուսուցիչը պետք դեռահասներին միտի սեփական ուժերով խնդիրները գիտակցելուն, բայց սա բավականին բարդ գործ է առանց տեսանելի օրինակների: Սա առավել հեշտ կլիներ, եթե դասի ընթացքում

հնարավոր լիներ դիտել դեռահասության տարիքին բնորոշ որևէ ֆիլմ, որում վեր հանվեին բազմաթիվ խնդիրներ և ավարտին լուծում տրվեր, որից հետո դեռահասները կգիտակցեին իրենց խնդիրները (այս կամ այն չափով նման ֆիլմային դրվագներին) և կառաջարկեին որևէ լուծում:

Հույզերի հետ աշխատանքում ցանկալի կլինի ուսուցչի կողմից մի նոր, զարգացող գիտության գործադրումը, որը կոչվում է հոգեսոմատիկա: Հոգեսոմատիկան բժշկական ուղղություն է, որն ուսումնասիրում է հույզերի ազդեցությունը ֆիզիոլոգիական գործընթացների վրա: Ուսուցիչը պետք է բացատրի երեխաներին, թե որ բացասական հույզը հետագայում ինչ առողջական խնդիրներ կարող է առաջացնել՝ միևնույն ժամանակ թույլ տալով, որ դեռահասն ինքը գա այն մտքին, որ ունի որոշակի կոնկրետ բացասական հույզ, օրինակ, վիրավորանք ծնողների հանդեպ, որը, ըստ հոգեսոմատիկայի, քաղցկեղի առաջացման վտանգ է ստեղծում: Այս ամենից հետո միայն աշխատել լուծման ուղիների վրա:

Ցանկալի է, որ նման դասերը շատ լինեն տարբեր առարկաների շրջանակներում: Ցանկալի է նաև, որ ուսուցիչները պատրաստ լինեն կիրառել զարգացող գիտությունների տեխնիկաները դասաժամերի ընթացքում: Միևնույն ժամանակ արդյունավետության հասնել հնարավոր է միայն մեկ դեպքում, երբ այս գործընթացը զուգորդվում է ծնողական կրթությամբ և պատկան մարմինների համապատասխան ուշադրության դրսևորմամբ առ այն, որ դպրոցներն ապահովված լինեն համապատասխան ժամանակակից տեխնիկաներով և տեխնոլոգիաներով:

Ասվածից պարզ է դառնում, որ 21-րդ դարում հաջողության հասնելու համար միայն ակադեմիական գիտելիքները և քննադատական մտածողությունը չեն կարող բավարարել: Անհրաժեշտ են նաև որոշակի տեխնիկական հմտություններ: Դրա համար էլ շատ աշակերտներ ձգտում են նախապես գիտելիքներ և հմտություններ ձեռք բերել տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտից՝ դրանով իրենց համար հաջող մասնագիտական հեռանկար ապահովելով: Ծրագրային ապահովումը, որը լիովին ինտեգրված է ինտերնետի հետ, սովորողներին հնարավորություն է տալիս տեղեկատվություն ստեղծել ու փոխանակել: Եվ միայն այն գաղափարը, որ իր նախագիծը տեսնելու և գնահատելու են հասակակիցները ու ծնողները, ստիպում է աշակերտին լիարժեք դրսևորել իր գիտելիքներն ու հնարավորությունները:

Տեղեկատվական-հաղորդակցակaն տեխնոլոգիաները սովորողների համար հնարավորություն են ստեղծում ձեռք բերել.

1. տեղեկատվությունն ինքնուրույն որոնելու, ընտրելու, հավաքելու, ուսումնասիրելու և դասակարգելու կարողություն,

2. տեխնոլոգիական համակարգերը, տեղեկատվությունն ու ծրագրերը պատասխանատվությամբ օգտագործելու կարողություն,

3. ուսումնառության մակարդակը բարձրացնելու, արդյունավետությունը մեծացնելու և ստեղծագործական մոտեցումը խթանելու նպատակով տեխնոլոգիաներ կիրառելու կարողություն,

4. իրական կյանքում խնդիրներ լուծելու և դրանց ռազմավարությունների զարգացման, ինչպես նաևեղեկացվածության արդյունքում արաշումներ կայացնելուհամար տեխնոլոգիական միջոցներ կիրառելու կարողություն:

Ընդգծենք, որ ՀՀ կառավարության 4 փետրվարի 2021 թվականի N 136-Ն որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին», որով հաստատվեց «Հանրակրթության պետական չափորոշիչը», նոր հնարավորություններ ստեղծեց պրոբլեմային ուսուցման զարգացման և այդ գործընթացում թվային տեխնոլոգիաների ներգրավման համար: Ուսումնասիրելով չափորոշիչը, մասնավորապես, III. Հանրակրթական տարրական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները և IV. Հանրակրթական հիմնական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները [21] , տեսնում ենք, որ շեշտադրվում է խնդիրների վերհանման, դրանց լուծման ուղիների բացահայտման կարողության զարգացումը, ինչն էլ հենց պրոբլեմային ուսուցման հենքն է: Ընդգծվում է նաև 2-6-րդ դասարաններում թվային սարքերից և ծրագրերից օգտվելու կարողություններ ձևավորող առանձին կամ ինտեգրված ուսումնական առարկայով տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կրթության արդյունքների գործնական կիրառությունը 7-12-րդ դասարաններում՝ կիրառական ծրագրերի ուսումնասիրության միջոցով կյանքի պահանջներին և ապագա կրթությանը, աշխատանքային գործունեությանը բավարարող համակարգչային անհրաժեշտ հմտություններ զարգացնող առանձին ուսումնական առարկայի շրջանակներում: Սա փաստում է, որ նոր պահանջներ են դրվում դպրոցի, ուսուցչի և աշակերտի առջև, մասնավորապես աշակերտի, քանի որ նոր չափորոշիչը հիմնվում է սովորողի հմտությունների կարողունակությունների վրա: Հավասարապես շեշտադրվում են սովորողի գիտելիքը, հմտությունը, դիրքորոշումը և արժեքային համակարգը:

[21] ՀՀ կառավարության 4 փետրվարի 2021 թվականի N 136-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետությանկառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին «Հանրակրթության պետական չափորոշիչ» հասանելի է հետևյալ հղմամբ https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788 19.08.2022, ժամը 23:19 դրությամբ .

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, պրոբլեմային ուսուցման ընթացքում աշակերտները ուսուցչի ղեկավարությամբ իրենց ունեցած գիտելիքների հիման վրա լուծում են պրոբլեմային խնդիրներ, հաղթահարում դժվարին իրավիճկներ, որոնում գործողության նոր եղանակներ, կարգավորում ու կողմնորոշում իրենց գործունեությունը, գործադրում պրոբլեմային շարադրանքի, մասնակի որոնողական կամ էվրիստիկական, հետազոտական մեթոդներ, ինքնուրույնաբար ձևակերպում իրենց մտահոգությունները ու եզրահանգումները, հասնում վերջնական նպատակի:

Մենք ուսումնասիրեցինք պրոբլեմային ուսուցման կիրառումը դեռահասների հետ աշխատանքում, ինչի շրջանակներում անդրադարձանք դեռահասության տարիքին բնորոշ առանձնահատկություններին: Ուսումնասիրություններից պարզ է դառնում, որ դեռահասության տարիքը ճգնաժամային տարիք է, որը կարևորվում է բազմաթիվ ֆիզիոլոգիական և հոգեբանական փոփոխություններով: Ձևավորվում են նոր հետաքրքրություններ, նոր ձգտումներ և արժեքներ: Փոխվում են հարաբերությունները շրջապատի, ընկերների և ընտանիքի հետ: Ձևավորվում են վարքային հակազդումներ:

Դեռահասները փորձում են ազատվել տհաճ դարձած խնամակալությունից և ծնողների հետ հարաբերությունները կազմել հավասարության սկզբունքով, ինչի ընթացքում էլ առաջանում է ընտանիք-դպրոց-երեխա ակտիվ փոխգործակցության կարիք՝ միտված դեռահասի հետ հարաբերությունների կարգավորմանը, նրա հոգեբանական կայուն վիճակի ապահովմանը:

Մեր առջև նպատակ էինք դրել ուսումնասիրել այն դասապրոցեսը, որի ընթացքում պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիաների կիրառմամբ ուսուցիչը կհասնի դեռահասության տարիքին բնորոշ խնդիրների գիտակցմանը և ընդունմանը դեռահասի կողմից: Կարծում ենք, որ Հայաստանում դպրոցները և ուսուցիչները դեռ շատ անելիքներ ունեն, որպեսզի հնարավոր լինի ամբողջությամբ ներդնել նորագույն մոտեցումներ, մասնավորապես տեսալսողական սարքերի առումով, ինչի մասին անդրադարձ ներկայացվել է աշխատանքի համապատասխան մասում: Այդ առումով ներկայացնենք որոշ առաջարկություններ:

Հիմք ընդունելով աշխատանքում կատարված ուսումնասիրությունները՝ առաջարկում ենք՝

- Պրոբլեմային ուսուցման ամբողջական ներդրման և արդյունավետ գործառնման նպատակով առաջարկում ենք ապահովել ծնողների ակտիվ

մասնակցություն, որը կարելի է ապահովել ծնողական կրթության միջոցով: Ի՞նչ կտա մեզ այս առաջարկի կենսագործումը: Ծնողական կրթությունը հետապնդում է կարևորագույն գերնպատակ, այն է ծնողներին մատուցել գիտելիքներ երեխաների բազմակողմանի աճի, զարգացման, տարիքային առանձնահատկությունների, դրանցից բխող արժեհամակարգային, համոզմունքային և գործունեության ձևերի փոփոխությունների մասին: Ծնողական կրթությունը պատրաստում է ծնողներին վերը նշյալ փոփոխություններին ճիշտ արձագանքելուն և համապատասխան վերաբերմունք ձևավորելուն: Ասվածը պայմանավորում է այս առաջարկի կենսագործման հրատապությունը և ծնողական կրթության կազմակերպման համապատասխան ձևերի ընտրությունը: Առաջարկում ենք ծնողական կրթությունը կազմակերպել ինչպես ավանդական, այնպես էլ ոչ ավանդական ձևերով: Ավանդական են համարվում ծնողական ժողովները, մանկավարժական զրույցները ծնողների հետ, համատեղ միջոցառումների կազմակերպումը, անհատական և խմբային խորհրդատվությունները և այլն: Ոչ ավանդական ձևերի թվին են դասվում քննարկումները, սեմինարները, «կլոր սեղանները», թրեյնինգները և այլն:

Ծնողական կրթությամբ ապահովվում է ընտանեկան դաստիարակության շարունակականությունը: Դպրոցը չի կարող փոխարինել ընտանիքին, սակայն կարող է բարձրացնել նրա դերը դաստիարակության հարցում: Ծնող-դպրոց համագործակցության կենտրոնում երեխան է, որն իր կրթության և զարգացման գլխավոր դերակատարն է դպրոցում և ընտանիքում: Եթե դպրոցն ու ծնողները հաջողությամբ համագործակցում են, ինչը աշակերտի կրթության վճռորոշ գործոն է, ապա հաղթանակն ապահովված է: Երեխայի զարգացման վրա ամենաշատը ներգործում է ընտանիքը: Աշակերտի հաջողությունը դպրոցի և ընտանիքի ընդհանուր նպատակն է: Ասվածն էլ վերաճում է որպես ծնողական կրթության գերնպատակ:

- Պրոբլեմային ուսուցման համատեքստում ՏՀՏ ակտիվ կիրառության առումով առաջարկում ենք կատարել փոփոխություններ հետևյալ երեք ուղղություններով.

1. Առանձին դպրոցներում համակարգիչների մեկուսացած, ժամանակ առ ժամանակ օգտագործումից անցնել դպրոցների կապակցման ցանցի ստեղծմանը, որը կընդգրկի եթե ոչ ՀՀ բոլոր դպրոցները, ապա գոնե տարածաշրջանային դպրոցները: Ցանցին հասանելիություն պետք է ունենան նաև աշակերտները՝ փորձի և գիտելիքների փոխանակման նպատակով:
2. Կարողությունների և հմտությունների՝ դեպքից դեպք, անկանոն ձևավորումից անցնել ուսուցիչների և աշակերտների տեխնոլոգիական կարողություններին ներկայացվող պահանջների, չափորոշիչների մշակմանը և կրթակարգում/ուսումնական

ծրագրերում տեխնոլոգիաների ներդրմանը, ինտեգրացիային՝ ակտիվորեն ներգրավելով ուսուցիչներին:

3. Ուսուցման-ուսումնառության ոլորտում տեխնոլոգիաների ներդրմամբ զբաղվող խանդավառ ուսուցիչների առանձին խմբից անցնել համընդհանուր տեխնոլոգիական գրագիտության՝ ընդգրկելով բոլոր ուսուցիչներին և դպրոցի ողջ կոլեկտիվին, որոնք դրանք կկիրառեն իրենց ամենօրյա աշխատանքում:

Ի՞նչ կտան մեզ վերը նշված 3 փոփոխությունները: Ուսուցիչները և ուսումնական գործընթացի այլ օղակները կսկսեն գիտակցել ՏՀՏ կիրառության անհրաժեշտությունը և կդադարել դիտարկել դրանց կիրառությունը որպես ԿԳՄՍ նախարարության պահանջների կատարում: Ուսուցիչներից շատերը համակարգչային հմտությունները զարգացնելը, էլեկտրոնային նյութեր ստեղծելը և կիրառելը համարում են լրացուցիչ աշխատանք: Այս մոտեցմամբ նրանք թույլ չեն տալիս սովորողներին գիտակցել դրանց կարևորությունը ուսումնական գործընթացի, անձնային խնդիրների վերհանման գործում: Ուսուցիչների ցածր աշխատավարձը լրջագույն խնդիր է, որ ետ է պահում նրանց լրացուցիչ աշխատանքից, նորարարությունից: Սակայն ԵՄ փորձը հուշում է, որ կարելի է կիրառել խրախուսական տարբեր մեթոդներ, որոնք կշահագրգռեն ուսուցիչներին կիրառել ՏՀՏ: Մեր կողմից նշված փոփոխությունների կատարման արդյունքում բոլոր կողմերը կգիտակցեն ՏՀՏ կիրառության առավելությունները և կզգան, թե որքանով է այն հեշտացնում թե՛ ուսուցչի գործը, թե՛ աշակերտների՝ առարկան հասկանալու, թեմաներն ընկալելու խնդիրը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Արդյունավետ շփում դեռահասների հետ https://elearning.kasa.am/pluginfile.php/10018/mod_resource/content/0/%D4%B1%D6%80%D5%A4%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A1%D5%BE%D5%A5%D5%BF%20%D5%B7%D6%83%D5%B8%D6%82%D5%B4%20%D5%A4%D5%A5%D5%BC%D5%A1%D5%B0%D5%A1%D5%BD%D5%AB%20%D5%B0%D5%A5%D5%BF.pdf հասանելի է 19.08.2022, ժամը 23:04.
2. Գասպարյան Գ. և այլք. Անգլերեն լեզու: Հանրակրթական դպրոցի 9-րդ դասարանի դասագիրք /Գ. Գասպարյան, Ն. Հովհաննիսյան, Հ. Քաջբերունի/ -Եր.: «Մակմիլան-Արմենիա», 2010.-160 էջ:
3. ՀՀ կառավարության 4 փետրվարի 2021 թվականի N 136-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին «Հանրակրթության պետական չափորոշիչ» https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788 հասանելի է հետևյալ հղմամբ https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788 19.08.2022, ժամը 23:19 դրությամբ .
4. Винникова И.В. Проблемные задания на развитие психических процессов/ И.В.Винникива//, 2013., С. 25.
5. Крутецкий, В. А. Основы педагогической психологии. М., 1972, с.63-78.
6. Ксензова Г.Ю. Перспективные школьные технологии: учебно-методическое пособие/ Г.Ю.Ксензова.- Москва: Педагогическое общество России, 2017., с. 56.
7. Курманбакеева Л. В. Этапы становления ребенка как социального субъекта: философская периодизация. Евразийский Союз Ученых (ЕСУ) # 7 (16), 2015., с. 136.
8. Левкова Т.В. Поиск смысла жизни как задача развития современного подростка // Современные научные исследования и инновации. 2016. № 1., с. 159.
9. Матюшкин А.М. Проблемные ситуации в мышлении и обучении. Москва, 2014., с. 45.
10. Минаев А.В. «Отчуждение в подростковом возрасте и его преодоление» (автореферат канд. диссертации), 1999, с.16.
11. Немов Р. С., Психология, https://www.gumer.info/bibliotek_Buks/Psihol/nemov2/04.php հասանելի է 19.08.2022, ժամը 22:57.

12. Осин Е.Н., Леонтьев Д.А. Дифференциальный опросник переживания одиночества:структура и свойства // Психология. Журнал Высшей школы экономики, 2013. Т. 10.
№ 1. С. 55–81.
13. Прихожан А.М. Работа с родителями подростков (материалы к проведению родительских собраний в средней школе) (окончание) Вестник практической психологии образования (2009. Том 6, № 2. С. 96–104)
14. Реана А. А.,Психология подростка,-М., Академия, 2008., с. 91.
15. Селевко Г.К., Педагогические технологии на основе активизации, интенсификации иэффективного управления, УВП. М.: НИИ школьных технологий, Москва, 2005, с. 58-59.
16. Ситаров В.А. Проблемное обучение как одно из направлений современных технологий обучения [Текст] // Знание. Понимание. Умение -М.: Московский гуманитарный университет -№1 -2009. -С. 148-150.
17. Фоменко Н.В. Подростковый возраст как наиболее сложный этап развития ребенка
// Вестник Таганрогского государственного педагогического института. 2014. № 2. С.201.
18. Худоян, С.С., Патологические метаморфозы "Я" и кризисы развития личности// Независимый психиатрический журнал// М., 2007 , № 4. с. 29-33.
19. Чудновский В.Э. К вопросу о необходимости учебного курса формирования смысложизненных ориентаций старшеклассников // Вестник МГОУ, серия «Психологические науки». 2015. No 1. С. 66–72
20. Duch, B. J., Groh, S. E, & Allen, D. E. (Eds.). The power of problem-based learning. Sterling, VA: Stylus., 2001, p.53.
21. Foundation for Critical Thinking, A draft statement of principles. The National Council for Excellence, 2019. Հղումը՝ https://www.criticalthinking.org/pages/the-national-council-for- excellence-in-critical-thinking/406 հասանելի է 19.08.2022, ժամը 21:49.
22. Nilson, L. B. Teaching at its best: A research-based resource for college instructors (2nd ed.). San Francisco, CA: Jossey-Bass. , 2010, p.41.